ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2009թ. ընթացքում ՄԿՈՒՀԱԿ-ի կատարած աշխատանքների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԿԱԻ կողմից 11.03.2009թ. N 09060134-1 պետական աջակցության պայմանագրի հավելված 1-ի միջոցառումների:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.</u> «ՄԿՈՒ մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական կարողությունների չափորոշիչների և գնահատման չափանիշների մշակում»

Ճշտվել և ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատվել է նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության 34 մասնագիտությունների ցանկը, որոնց համար պետք է մշակվեն կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչներ: Ձևավորվել են չափորոշիչների նախագծերը մշակող աշխատանքային խմբերը, նրանց հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրերը: Խմբերը ավարտել են 34 չափորոշիչների նախագծերի մշակումը և ներկայացրել են ՄԿՈՒՀԱԿ: Չափորոշիչների նախագծերը ուղարկվել են փորձաքննության ոլորտային հանձնաժողովներին, որոնց կողմից կատարված դիտողությունների համաձայն խմբերը վերամշակել են նախագծերը և վերջնական տարբերակով ներկայացրել ՄԿՈՒՀԱԿ: ՄԿՈՒՀԱԿ-ում այդ նախագծերը բերվել են ընդունված ձևաչափի և այնուհետև ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարություն:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2</u>. «ՄԿՈՒ կարողությունների չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ծրագրերի մշակում»

Ձևավորվել են ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր մշակող աշխատանքային խմբերը, նրանց հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր: Խմբերի կողմից մշակվել են նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության 40 մասնագիտությունների և որակավորումների համար ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3</u>. «Վերապատրաստման դասընթացների կազմակերպում»

Կազմակերպվել և անց է կացվել վերապատրաստման հետևյալ դասընթացները.

1. ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների
2. ՄԿՈՒ տնօրենների և տնօրենի տեղակալների

3. ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստողների
4. Պետական կրթական չափորոշիչների նախագծեր մշակող փորձագետների
5. Ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր մշակող փորձագետների
6. Ոլորտային հանձնաժողովների անդամների:

Ընդհանուր առմամբ վերապատրաստվել է չափորոշիչների նախագծերը մշակող աշխատանքային խմբերի կազմում ընդգրկված 108 փորձագետ, 4 խմբով, 30 ժամանոց ծրագրով, ՄԿՈՒ դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստում իրականացնող 9 վերապատրաստող, 1 խմբով, 30 ժամանոց ծրագրով, ոլորտային հանձնաժողովների 91 անդամներ, 4 խմբով, 36 ժամանոց ծրագրով, քոլեջների և արհեստագործական ուսումնարանների 508 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, 20 խմբով, 30 ժամանոց ծրագրով: Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների խմբերում վերապատրաստվել են նաև 20 տնօրեններ և 20 տնօրենի տեղակալներ:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4</u>. «ՄԿՈՒ քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող հետազոտական նախագծերի իրականացում»

Կազմվել է տեխնիկական առաջադրանք ՄԿՈՒ քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող հետազոտական նախագծերի իրականացման համար, որի հիման վրա «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարվել է մրցույթ: Անցկացված մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, և ՀՀ ԿԳ նախարարի թույլտվությամբ կատարվել է գնում մեկ աղբյուրից և 23.11.2009թ. կնքվել է աշխատանքի ձեռքբերման N ԿԱԻ ԱՇԽԲ-09/26ՄԿՈՒ պայմանագիր «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի հետ ՄԿՈՒ քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող հետազոտական նախագծերի իրականացման համար: Արդյունքում վերոնշյալ կազմակերպությունը կատարել և ներկայացրել է «Միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիոլոգիական հետազոտություն»:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5</u>. «ՄԿՈՒ բարեփոխումների արդյունքների գնահատում»

ՄԿՈՒՁԱԿ-ի կողմից մշակված «ՀՀ ՄԿՈՒ ոլորտում իրականացված բարեփոխումների ազդեցության գնահատման համակարգը» մեթոդական ուղեցույցի հիման վրա միջին մասնագիտական 5 ուսումնական հաստատություններում (Երևանի պետական ճարտարագիտական քոլեջ, Երևանի հումանիտար-տեխնիկական պետական քոլեջ, Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ, Իջևանի պետական քոլեջ,

Եղեգնաձորի պետական քոլեջ) իրականացվել են այդ քոլեջներում տեղի ունեցած բարեփոխումների ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կատարվելեն համապատասխան առաջարկություններ ուսումնական հաստատությունների գործունեությունը բարելավելու ուղղությամբ:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6</u>. «ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների ազգային բազայի համալրում»

Աշխատանքները կատարելու համար կնքվել է պայմանագիր, որի հիման վրա ՄԿՈՒ համակարգի մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների ազգային բազան համալրվել է 28 պետական կրթական չափորոշչով:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7</u>. «Կարողութենամետ չափորոշիչների մշակման և ներդրման սկզբունքների հայեցակարգի մշակում»

Մշակվել է կարողութենամետ չափորոշիչների մշակման և ներդրման սկզբունքների հայեցակարգը և ներկայացվել է ԿԳ նախարարություն՝ սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8</u>. «ՄԿՈՒ համակարգի տեղեկատվական ապահովման սկզբունքների և մեխանիզմների հայեցակարգի մշակում»

Մշակվել և ՀՀ ԿԳ նախարարություն է ներկայացվել տեղեկատվական ապահովման սկզբունքների և մեխանիզմների հայեցակարգը:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9</u>. «ՄԿՈՒ վերաբերյալ եվրոպական և այլ երկրների փաստաթղթերի թարգմանություն և տպագրում»

Թարգմանության համար ընտրված, ՀՀ ԿԳՆ հետ համաձայնեցված փաստաթղթերից թարգմանվել է նախատեսված շուրջ 1000 էջը:

2008թ. ընթացքում թարգմանված նյութերը բազմացվել են 10-ական օրինակով: 2009թ. թարգամնված նյութերից 800 էջը հանձնված է տպագրության՝ 10-ական օրինակով:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10</u>. «Աջակցություն ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթությանն առնչվող անձնակազմի ՀՀ կառավարության կողմից ՄԿՈՒ համակարգին տրամադրվող օժանդակության և Եվրոպական Միության կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության արդյունավետ հրապարակայնության և տեսանելիության ապահովման գործառույթին»

Աշխատանքները կատարելու համար մշակվել է տեխնիկական առաջադրանք, դրա հիման վրա հայտարարվել է մրցույթ, սակայն մասնակցության հայտ որևէ կազմակերպության կողմից չի ներկայացվել: Գնումների գործակալությունից ստացված

գրության և ԿԳ նախարարության թույլտվության հիման վրա կնքվել է պայմանագիր, որի հիման վրա իրականացվել են նախատեսված հետևյալ գործողությունները.

- 12 բազմագործառութային քոլեջներում կատարված աշխատանքների արդյունքների մասին տեսանյութի նկարահանում,
- 2 հեռուստառեպորտաժի կազմակերպում և թողարկում,
- 2 հեռուստահաղորդման կազմակերպում և թողարկում:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11</u>. «ՄԿՈՒ համակարգի համար ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի մշակում և հրատարակում»

2009թ. մշակվել են հետևյալ ուսումնա-մեթոդական ձեռնարկները և ուսումնաօժանդակ գրականությունը. «Ոսկերչական գործ», «Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիա, կազմակերպում և կառավարում», «Դերձակություն», «Ուսանողների գնահատման մեթոդական ձեռնարկ», «Տնտեսագիտության հիմունքներ», «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ», «Իրավունքի հիմունքներ», «Պատմություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Ֆիզիկական կուլտուրա» առարկաների ծրագրերը և դրանց մեթոդական ուղեցույցները, «ՄԿՈՒ եզրույթների բառարանը», «Անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա՝ առողջապահության հիմունքներով» էլեկտրոնային ուսումնաօժանդակ նյութերը:

2008թ. և 2009թ. ընթացքում մշակված ուսումնական ձեռնարկները՝ «էկոլոգիական դաստիարակության հիմունքեր», «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների անատոմիա և ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով», «Կենսաչափություն», «Ոսկերչական գործ», «Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիա, կազմակերպում և կառավարում», ինչպես նաև «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ», «Տնտեսագիտության հիմունքներ», «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ», «Իրավունքի հիմունքներ», «Պատմություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Ֆիզիկական կուլտուրա» առարկաների ծրագրերը և դրանց մեթոդական ուղեցույցները, «ՄԿՈՒ եզրույթների բառարանը» նախապատրաստվել և հանձնվել են տպագրության:

<u>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 12</u>. «Հայաստանի ՄԿՈՒ համակարգի վերաբերյալ տեղեկատվական նյութերի հավաքում, մշակում և տարածում»

1. Աշխատանքները կատարելու համար մշակվել է տեխնիկական առաջադրանք, դրա հիման վրա հայտարարվել է մրցույթ, սակայն մասնակցության հայտ որևէ կազմակերպության կողմից չի ներկայացվել: Գնումների գործակալությունից ստացված գրության և ԿԳ նախարարության թույլտվության հիման վրա կնքվել է պայմանագիր, որի հիման վրա իրականացվել են նախատեսված հետևյալ գործողությունները.

- 12 տարածաշրջանային բազմագործառութային քոլեջների վերաբերյալ բուկլետների մշակում և տպագրում՝ հայերեն և անգլերեն լեզուներով (յուրաքանչյուր քոլեջի համար 150-ական օրինակ),
- ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ պաստառի տպագրում (150 օրինակ),
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում» տեղեկատվական եռալեզու գրքույկի մշակում և հրատարակում (1000 օրինակ),
- ՄԿՈՒ բարեփոխումների վերաբերյալ մամլո ասուլիսի կազմակերպում,
- հանրապետական մամուլում 7 նյութի հրատարակում,
- լրատվական 5 արձակված ռադիոռեպորտաժի կազմակերպում և թողարկում,
- 5 հեռուստառեպորտաժի կազմակերպում և թողարկում,
- ձևավորվել և գործարկվել է ՄԿՈՒՀԱԿ-ի կայքէջը:

Ամբողջ ծրագրի իրականացման հետ կապված չնախատեսված ծախսեր:

Քոլեջների և արհեստագործական ուսումնարանների տվյալների բազաների կառուցման և կառավարման էլեկտրոնային համակարգի ստեղծման ծրագրի կատարման նպատակով կնքվել է պայմանագիր համապատասխան կազմակերպության հետ, որն ունի հեղինակային իրավունք ՀՀ-ում կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների և պահանջների վերահսկման էլեկտրոնային կառավարման համակարգի ձևավորման համար:

Տվյալների բազայի համալրումը շարունակվելու է 2010թ. ընթացքում:

Բացի վերոգրյալ ծրագրային միջոցառումներից, ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 30 մասնագիտական ուսումնական հաստատության, 4 հասարակական կամ այլ ոչ պետական կազմակերպության կողմից մշակված շուրջ 55 վերապատրաստման դասընթացների ծրագրերի փորձաքննություն: Դիտողություններ և առաջարկություններ են ներկայացվել ավելի քան 10 հայեցակարգային, նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ, մշակվել են

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի և կրթության ձևերի՝ լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, համակարգչային դասարանի (լսարանի) նյութատեխնիկական հագեցվածության չափաքանակները, ուսումնադիդակտիկ հագեցվածության, գեղարվեստական, տեղեկատվական և այլ գրականության անհրաժեշտ չափաքանակները», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական, դասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները», պարբերաբար տրամադրել է ուսումնական գործին առնչվող խորհրդատվություններ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրեններին, նրանց տեղակալներին, դասախոսներին: ՄԿՈՒԶԱԿ-ի տարբեր աշխատակիցներ (Ս.Պիպոյան, Ա.Սահրադյան, Ն. Հովհաննիսյան, Լ.Կարախանյան, Ռ.Խաչիկյան, Տ. Բաբախանյան) փորձի փոխանակման կամ ուսումնասիրման նպատակով մասնակցել են արտասահմանյան գործողումների, բոլոր աշխատակիցները մասնակցել են մասնագիտական կրթության տարբեր հիմնախնդիրներին նվիրված միջոցառումների՝ սեմինարների, կոնֆերանսների, համաժողովների, շնորհանդեսների, վերապատրաստման դասընթացների: ՄԿՈՒԶԱԿ-ի հետևյալ աշխատակիցները, որպես վերապատրաստողներ, մասնակցել են վերապատրաստման դասընթացների.

- Ս.Պիպոյան (վերապատրաստել է քաղծառայողների և ոլորտային հանձնաժողովների անդամների, անցկացման վայրը՝ ԿԱԻ),
- Ա.Սահրադյան (վերապատրաստել է չափորոշիչներ, ուսումնական պլան և ծրագրեր մշակող անդամների, վերապատրաստողների, դասախոսների, արատադրական ուսուցման վարպետների, անցկացման վայրը՝ ԿԱԻ, Կապան, Արմավիր),
- Ռ. Խաչիկյան (վերապատրաստել է ուսումնական հաստատությունների խորհուրդների անդամների, անցկացման վայրը՝ Երևան, Իջևան, Վանաձոր),
- Լ. Կարախանյան (վերապատրաստել է ուսումնական հաստատությունների խորհուրդների անդամների, անցկացման վայրը՝ Երևան, Իջևան, Վանաձոր),
- Տ. Բաբախանյան (վերապատրաստել է դասախոսների, արատադրական ուսուցման վարպետների, անցկացման վայրը՝ Թալին, Արտաշատ),

ՄԿՈՒԶԱԿ-ի ՏՆՕՐԵՆ Ս. ՊԻՊՈՅԱՆ